600.0044.27.02.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2019 թվականի №44Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի №336Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի N272Ն որոշումը և հաշվի առնելով «ԱՍ-ՍԻՍՏԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի փետրվարի 19-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 29-ի «ԱՍ-ՍԻՍՏԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» №336Ա որոշման՝
   1) 1-ին կետում «տարածքում» բառը փոխարինել «և Երևան քաղաքի տարածքներում» բառերով,
   2) 2-րդ կետով հաստատված հավելվածի՝ «ԱՍ-ՍԻՍՏԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) №1270 լիցենզիայի պայմանների 4-րդ կետում «տարածքն է» բառը փոխարինել «և Երևան քաղաքի տարածքներն են» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի փետրվարի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
27 փետրվարի 2019թ